

# ՄԻ ՔԱՆԻ ՏԱՂ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՅՈՒՅ

Միջնադարեան երզնի Յովհաննէս Թըլկուրանցու յորինած տաղերի մասին դանազան մատենադարաններում գտնուող ձեռագրերի մէջ եղած տաղերի հիման վրայ, մինչ այժմ լոյս են տեսել մի քանի առանձին գրքեր, ուսումնասիրութիւններ եւ բազմաթիւ յօդուածներ, որոնք գրեթէ լրիւ ձեւով լոյս են սփռում միջնադարեան մեր սիրոյ երզնի կեանքի ու ստեղծագործութեան վրայ:

Վերջին տարիներում Փերիա դաւառի (Սպահանի շրջան) գրչագրերը ցուցակադրելիս, Խոյզան գիւղում Արմենակ Տէր Յովհաննիսեանի մօտ գտանք մի «Տաղարան», որի մէջ կային մի շարք երգեր՝ Հայ միջնադարեան տաղերգուներ Յովհաննէս Թլկուրանցուց, Մկրտիչ Նաղաշից եւ ուրիշներից:

Համաձայն «Սիոն» ամսագրի մէջ «Փերիա դաւառի գրչագրերի համառօտ ցուցակ»ը յօդուածում («Սիոն», 1965 թ., Համար 9, էջ 323) արած մեր խոստման, «Տաղարան»-ի մէջ եղած նիւթերի բովանդակութեան ցանկը տուեցինք առանձին յօդուածով («Սիոն», 1966 թ., Յունուար, էջ 16), Մկրտիչ Նաղաշի պատկանող զոյգ տաղերի հետ. այժմ եւս, դարձեալ ըստ մեր խոստման եւ «Սիոն» ամսագրի շատ յարգելի խմբագրի ցոյց տուած ջերմ հետաքրքրութեան, այստեղ առաջ ենք բերում «Տաղարան»-ում եղած եւ Թլկուրանցուն պատկանող ու վերագրուող բոլոր երգերը:

Նախքան երգերի գրի առնելը, յիշենք որ մեր ցանկութիւնն էր սրանք հրատարակել րանասէր Գերշ. Ն. Եպսկ. Մովսկանի՝ Թլկուրանցու մասին հրատարակած զիրքը ձեռքի տակ ունենալուց յետոյ, համեմատութեամբ իմանուէլ Պիլագեանի «Յովհաննէս Թլկուրանցի» (Երևան, 1960 թ.), Ա. Մնացականեանի «Հայկական Միջնադարեան Ժողովրդական Երգեր» (Երևան,

1956 թ.), 1740 թուին Կոստանդնուպոլսում տպագրուած «Գրքուկա որ կոչի Տաղարան», եւ մի քանի այլ 17-րդ դարում տպագրուած տաղարանների ու Ամենափրկչեան Վանքի Թանգարանի ձեռագրերում եղած երգերի:

Նկատի ունենալով, որ երկար փնտառութից յետոյ մեզ շայջողուեց ձեռք բերել Գերշ. Ն. Եպսկ. Մովսկանի հրատարակած զիրքը<sup>(\*)</sup> կամ նոյնիսկ 1954 թուի «Սիոն»-ի այդ համարները, ուստի որոշեցինք «Տաղարան»-ի երգերը հրատարակել, առանց յիշեալ գրքի համեմատութեան:

Ստորեւ մի քանի խօսք եւս մինչեւ այժմ հրատարակուած եւ մեր «Տաղարան»-ում եղած երգերի մասին, որոնք գրի ենք առել ըստ ձեռագիր «Տաղարան»-ի մէջ ունեցած հերթականութեան:

1. «Տաղ Ալէքսանոս Բզմաւորին»: Գրքում է «Տաղարան»-ի 41ր-48ա թերթերում: Յիշուած է էմ. Պիլագեանի «Յովհ. Թլկուրանցի» գրքում (էջ 80), առանց լրիւ երգի: Լրիւը շինք ունեցել ձեռքի տակ:

2. «Աչքի ինչ ես անցեր ետեւ»: Գտնուած է «Տաղարան»-ի 128ր-130ա թերթերում: Յիշուած է էմ. Պիլագեանի գրքում (էջ 82): Լրիւ երգը տրուած չէ: Մեր ձեռքի տակ եղել է Ն. Եպսկ. Մովսկանի «Հասկ» ամսագրում հրատարակած օրինակը (1943 թ., Մայիս-Յունիս, էջ 230):

3. «Գեմ բախար օղլի բախար»: Երգը լրիւ տպագրուած է էմ. Պիլագեանի գրքում (էջ 157, բացատրութիւնը՝ էջ 248), «Տաղարան»-ում գտնուած է 130ա-133ա թերթերի վրայ: Սոյն տաղը կայ նաև Ն. Զ. Թանգարանի թ. 271 ձեռագրում (թ. 181ր), որ միւսների հետ համեմատած՝ ունի մի քանի աննշան տարբերութիւններ:

(\*) Սոյն գիրքը այժմ ունեմք ձեռքի տակ, որը սիրով մեզ ուղարկեց «Սիոն»ի յարգոյ խմբագիրը:

4. «Ես ձեզ տեսայ սիրով նստած»։ Առաջին անգամ տպագրուել է 1513 թուի երգարանում։ լրիւ տպագրուած է էմ. Պիվազեանի զրքում (էջ 141, բացատր. էջ 143)։ Կայ նաև Ն. Զ. Թանգարանի թ. 271 ձեռագրում (թ. 183ա), ունի չնչին տարբերութիւն և պակասում է չորրորդ տունը։ Մեր ձեռքում եղած «Տաղարան»-ում զըտնըում է 133ա-134ա թերթերում։

5. «Յանկարծակի մէկ մի տեսայ»։ Գրուելում է «Տաղարան»-ի 134ա-134բ և 153ա-153բ թերթերում, միասին ունեն վեց տուն։ Երգն սկսւում է «Աւրհնեալ անուն արարողին» սկզբնատողով։ Տպուած է էմ. Պիվազեանի զրքում (էջ 148, բացատրութիւնը՝ էջ 245), որտեղ պակասում է երկրորդ մասի սկիզբի մէկ տունը։ Երգը գտնւում է նաև Ն. Զ. Թանգարանի թ. 271 ձեռագրում (թ. 183ա), որտեղ պակասում են առաջին, երկրորդ և վերջին տուները, իսկ երրորդ տան առաջին բառը փոխան «Ճոխայգնաց»-ի՝ գրուած է «Կոխայգնաց», ունի այլ աննշան տարբերութիւններ ևս։

6. «Օրինեալ անուն անմահ բանին»։ Գտնւում է «Տաղարան»-ի 134բ-135բ թերթերում։ Տպուած է էմ. Պիվազեանի զրքում (էջ 187, բացատր. էջ 261), որի հետ համեմատած՝ «Տաղարան»-ում կան պակաս տուներ և խախտուած է զբանց հերթականութիւնը։ Երգը գտնւում է նաև Ն. Զ. Թանգարանի թ. 214 (թ. 142) և թ. 271 (թ. 183բ) ձեռագրերում։ Առաջինում երգն սկսւում է «Ա(ւր)հ(նեա)լ է անուն Ա(ստուծո)յ անմահին», իսկ միւսում՝ «Օրհնեալ անուն արարողին» սկզբնատողերով։

7. «Արեկ արեկ իմ խուփ(պ) սուրաք»։ Գտնւում է «Տաղարան»-ի 139ա-140ա թերթերում։ Երգը լրիւ տպուած է էմ. Պիվազեանի զրքում (էջ 119, բացատր. էջ 233)։ Կայ նաև Ն. Զ. Թանգարանի թ. 271 ձեռագրում (թ. 165բ)։

8. «Ունեք ունես զալմով քաշած»։ Գտնւում է «Տաղարան»-ի 140ա-140բ թերթերում։ Թւում է որ առաջին անգամն է տպագրուում։ Չենք գտել մեր ձեռքի տակ եղած երգերի մէջ։ Մեր կարծիքով պատկանում է Թլիուրանցուն, չնայած որ երգի վերջում Յովհաննէս անուան փոխարէն

գրուած են «Յիւանն Ուն» բառերը։ Երգի վերնագիրը գրուած է «Սիրոյ Յովանիսի»։

9. «Գու արեգական նման ելանես ի յառաւօտ»։ Գտնւում է «Տաղարան»-ի թերթ 142բ-144բ-ում։ Տպագրուում է առաջին անգամ, զոնէ մեզ այդպէս է թւում։ Վերնագիրը գրուած է «Սիրոյ Յովանիսի»։ Թիւ 8 երգի նման վերջում յիշուած չէ երգչի անունը, սմն ընդօրինակող «Յովանէս» անունը վերցրել (կամ թերեւս պակասում է վերջին տունը) և յիշել է իր՝ «Ջաքարիա» ի անունը, շմտածնայով նաև իրեն կոչել «բանաղոյ»։

10. «Տեսայ սուրաք մի գեղեցիկ»։ Գտնւում է «Տաղարան»-ի թ. 153բ-154ա-ում, որ թերթ է և ունի միայն չորս տուն։ Լրիւը՝ 8 տուն, տպագրուած է էմ. Պիվազեանի զրքում (էջ 122, բացատր. էջ 234), որի հետ համեմատած՝ ունի բառերի որոշ տարբերութիւն։ Երգը (դարձեալ ոչ լրիւ) գտնւում է նաև Ն. Զ. Թանգարանի թ. 271 ձեռագրում (թ. 183բ), առաջին անգամ տպագրուել է 1513 թուի Տաղարանում, որը մենք չենք ունեցել ձեռքի տակ։

11-12. «Գու զանձ մնացական խնդրէ» («Տաղարան» թ. 154ա-159բ) և «Այբէն մինչե ց'իւն զովեմ քան իմ լեզուէս» (թ. 156բ-159բ-թերթ)։ Շատ հաւանական է որ լինեն Թլիուրանցունը, քանի որ զբանցից առաջինի վերնագիրն է «Տաղ Սիրոյ Յովանիսի ասացեալ»։ Այսպիսի վերնագիրներ ունեն երգարանում եղած Թլիուրանցու միւս երգերն ևս, կամ՝ «Սիրոյ է ասացեալ» և այլն։

Սոյն երգերից վերջինը դժբախտաբար «Տաղարան»-ում մնում է թերթի, միւս թերթերը չկան և վերջանում է Բ տառի վրայ։ Հակառակ մեր փնտռութիւն, այլ երգարաններում չգտանք, ըստ երեւոյթին սրբանք ևս անտիպ են։

Ստորի բերում ենք ցանկը Թլիուրանցուն պատկանող այն երգերի, որոնք զըտնըում են Նոր-Ջուղայի Թանգարանի մի քանի ձեռագրերում, որոնք մինչ այժմ հրատարակուած է եղել մեզ գտնել։

1. «Արեւանման շող-շող կտան»։ Թանգարանի թ. 271 ձեռագիր (թ. 166ա, էմ. Պիվ. էջ 125)։

2. «Հազար ուսուֆ է քեզ ծառայ»: Թ. 271 ձեռագիր (թ. 166բ, էմ. Պիվ. էջ 128):

3. «Լոյս երեսացդ եմ քո փափախ»: Թանգարանի թ. 271 ձեռագիր (թ. 167ա, էմ. Պիվ. էջ 134):

4. «Ի՛նչ մահն չէր ու կամ մեռնիլ»: Թանգարանի թ. 271 ձեռագիր (թ. 167բ, էմ. Պիվ. էջ 137):

5. «Աղէկ պատկեր բոլոր եւ գեղեցիկ ես»: Թանգարանի թ. 271 ձեռագիր (թ. 168ա, էմ. Պիվ. էջ 144):

6. «Աստուած անսկիզբն եւ անսահման»: Վանքի ձեռագիր թ. 148 (թ. 41բ-17ա: Ունի պակաս տուններ եւ որոշ տարբերութիւն: էմ. Պիվ. էջ 164):

7. «Քանի դատիս ի հետ մեղաց»: Վանքի ձեռագիր թ. 148 (թ. 47ա-48բ, էմ. Պիվ. էջ 178): Երջը լրիւ է բայց ունի տարբերութիւններ:

8. «Այսար էի իփստ արաում»: Տրպաղբուսած է էմ. Պիվագեանի «Յովհ. Թլկուրանցի» զբոս (էջ 219, յաւելում:), նաև 1740 թուի «Տաղարան»-ում (Վանքի գրադարան թ. 2359, էջ 358) եւ տողերս գրողին պատկանող մի հին տպուկ (Թրականն անյայտ) Տաղարանում (էջ 218): Երեքն էլ ունեն կական տարբերութիւններ:

9. «Այրէն մինչեւ ի քէն գանգատ ունեմ ես»: Վանքի Թանգարանի ձեռագիր թ. 271 (թ. 152բ, էմ. Պիվ. էջ 223, յաւելում):

10. «Այս ինչ կրակ էր գիս այրեց»: Տրպաղբուսած է էմ. Պիվագեանի զբոս (յաւելում էջ 226), նաև Ա. Մնացականեանի «Հայկական Միջնադարեան Ժողովրդական Երգեր» զբոս (էջ 183): Սոյն զբոսի ներածականի մէջ տրուած են նաև որոշ կարեւոր լուսարանութիւններ Թլկուրանցու մասին:

11. «Է՛ մահ քանի յիշեմ զքեզ»: Տպուած է էմ. Պիվագեանի զբոս (էջ 173, բացատր. էջ 252), ինչպէս եւ երկու այլ տպուկ «Տաղարան»ներում (\*): Սրանցից մէկը

(\*) «Տաղարան»ներից մէկը տպագրուած է 1740 թուին Կոստանդնուպոլսում, բաղկացած է երկու անջատ մասերից, 384 եւ 144 առանձին էջերով: Ունի մեծ բուով դարիքի, բլրուի եւ հայերէն ու բուրբերէն խոսք երգեր:

տպագրուած է 1740 թ. Կոստանդնուպոլսում (էջ 376) (Ն. Ջ. Վանքի գրադարան-մատենագարան, թ. 2359). Երկրորդը՝ Թրականն անյայտ (էջ 373) (պատկանում է Ս. Գէորգ Եկեղեցուն):

Սոյն երկու տպագրութիւնների մասին եւս յիշուած չէ էմ. Պիվագեանի «Յովհաննէս Թլկուրանցի» զբոսում:

1

Տաղ Ալէքսանու ձգնաւորին Ասացեալ է:

1

Աստուած գրած եւ մարդատեր,  
Երբակ յէր իւր ծառայիք,  
Ով հաւատով պարզեմ խնդրէ,  
Փութով առնէ զխնդրելին:

2

Ի՛նչ միտ զնէք մայ զվարեմ ասեմ,  
ԶԱլէքսանու նգնաւորին,  
Տէրն տայ ձեզ խաղաղութիւն,  
Եւ ինձի մայր ելեալ այս բանին:

3

Աստուածատեր իշխան մի կայր,  
Եփրիմնոս անուց կասիմ,  
Մեծ մայն միտ քաղաք Ստամբուլ,  
Որ բազաւորքն(1) կօծէին:

4

Ինքն եւ իր կիցն բարի,  
Պատու բանին Աւետարանի(2),  
Կարգաս տունին ոսկով ծեփած,  
Գանձ ունէին որդի յունէին:

- 1 - Ձեռագրում՝ բազաւորքն:
- 2 - Ձեռ.՝ օստարանի:

Բացի սրանից, իմ ձեռքի տակ կան երկու այլ հնատիպ երգարան, բուականներն անյայտ և սկզբից ու վերջից բերի. սրանցից մէկի ցանկն սկսում է էջ 221-ից, իսկ միւսն ունի (մտ) 384 էջ, 92 (ՊԲ) երգ և ցանկի վերջում գրում է. «Աղջնմ գնեց Եղսարք յիշուելիք միով աստուած ողորմեայիւ, Եգրատեանօրն արքեպման արիքն եւ զաշխատաւորն զօրծարանիս: Քանզի մինչեւ ցը այս վայր արշափ տաղարան որ տրջված է, սա հարուստ է եւ զեր յ վերջ ամենեցուն»:

Շատ հաւանաբար տպուած լինի 1701 թ. Կ. Պոլսում, որը յիշուած է Ք. Կորկուտեանի «Հայ Տպագիր Գիրքը Կոստանդնուպոլսում» (էջ 109, Բ. 17) զբոսում:

5

Կիճն փափափ ունէր որդոյ,  
Երբակ ի լաց պահէր աշուհն,  
Այնով շքէր ի լաց նորայ,  
Լալով առնէր զգանգատ սորին:

6

Եկեղեցայց կուտար պարզեւփ  
Ոսկի ծածկոց սուրբ սեղանին  
Քահանային կուտար դեկան(3),  
Ողորմութիւն առ ազատին:

7

Չոր եւ զքած հայր երկնային,  
Ողորմեցաւ իւր ծառային,  
Եր ետ նոցայ զաւակ արհնեայ,  
ԶԱլէփանոս աճուն ի բարին:

8

Յորժամ մեծացաւ եւ զարգացաւ,  
Բարով Ելից Զ-է տարին,  
Տարին ի վանքն Յովանիսին,  
Ոսկի բերան վարդապետին:

9

Ասացին ուսոյ տէր մեր որդին,  
Զուսումն սուրբ աստուածային,  
Չոր եւ ուսաւ եւ կատարաւ,  
Իմաստնացաւ սուրբն ի բարին:

10

Հայրն եւ մայրն կամեցան,  
ԶԱլէփ անոսն որ կարգէին,  
Գնացին ի դուռն հօրի,  
Զայն իշխանի դուստրն ուզեցին:

11

Նո՛հա ուրախ սրտի մտօփ,  
Զնազոն եւ զտալիքն կտրեցին,  
Ասացին կուտաւփ զմեր Մարգարիտն,  
Ալէփանոս ճախ պատկերին:

12

Շատ քահանայք իշխանք առին,  
Ալէփանոսի մօտ գնացին,  
Թէ երամայէ պարոն որդի,  
Եկ ի յարէնա նախաստեղծին:

13

Լալով մտաւ Եկեղեցին,

Երկիր էպագ սուրբ սեղանին,  
Եւ խոստացայ զիս Ա(ստուծոյ),  
Ինձ չէ կարիք կին աճուսին:

14

Շատ ամօրով խաւարանք տվին,  
Բռնողատեայ ձին Եծուցին,  
Տարին ի դուռն ծնողին,  
Իմնողքն ի դէմ Ելաւ զաւկին:

15

Լալով զորդին համբուրեցին,  
Հանց որ քաղաքն ի լաց հանին,  
Առեալ տարան հարսն եւ ամին,  
Փառօփ մտան ի յԵկեղեցին:

16

Շատ ազաչեց զիրիցանին,  
Լալով անկաւ ի ոս նոցին,  
Մի դնէփ պակ տնցաւորին,  
Ինձ չէ կարիք կին աճուսին:

17

Սուրբ քահանայքն զարմացան,  
Պակին դրին եւ արհնեցին,  
Յորժամ զտէրն կատարեցին,  
Տարեալ ոսկի սենեակն ամին:

18

Զդուռն եւ զդուստրն փակեցին,  
Անհոզ եղան եւ ննջեցին,  
Ալէփանոսն եւ Մարգարիտն,  
Մէն(ակ) բողին եւ գնացին:

19

Կինն խաղար եւ զիրկն ամէր,  
Զարքուցանէր անմեղ հոգին,  
Նա կուտարեան պակ ունէր,  
Մտիկ չարաւ ամենայնին:

20

Ասաց քէ քոյր իմ Մարգարիտ,  
Առ քեզ նշան զիմ մատանին,  
Մինչեւ ի դուրս Ելնամ եւ զամ,  
Ելաւ չղարձաւ ի յերանելին:

21

Ետեա ազատ մի ողորմագին,  
Եր ետ քեհեզն եւ ծիրանին,  
Ինքն հազաւ քարց ազատին,  
Եւ կամէր գնալ յեզր ծովին:

22

Այլ ոչ դարձաւ ի սինեկիմ.  
Կին ձայնեաց մարն Աննային.  
Ասաց տեսէ՛ք գձեր որդին,  
Ձիմ աչաց լոյս եւ ձեր հոգին:

23

Լալով ի դուրսն վազեցին,  
Ձկէ՛ֆամնոսն խնդրեցին,  
Ձարն եւ գիշերն ի շուրջ գային,  
Ձկէ՛ֆամնոսն որսնէին:

24

Ձկէ՛ֆամնոսն հայէին,  
Նայ զինաւար տայր հեծելին,  
Ես ծառայ եմ տեառն Յիսուսի(ն),  
Այն որ արար զերկինս եւ զերկիրն:

25

Ալէ՛ֆամնոսն նայեաց սնցաւ,  
Սինէական քրովբէ լերին,  
Արաքիայ եւ Յովիբայ,  
Ի ձերպս լերանց ֆարանց ի վիմին:

26

Երեսուն եւ մին տարի կեցաւ,  
Ազօրք արար յամապատին,

(\*),

27

Ել եւ գնաց Երուսաղէմ,  
Երկիր էպագ սուրբ սեղանին,  
Դարձաւ եկաւ յուրեայ ֆաղաֆ,  
Շաս ազօրեց յերանելին:

28

Ընդ եւ գնաց եզր ծովին,  
Եւ նայեցաւ հորն աշխարհին,  
Գնաց ի դուռն ծնօզին,  
Հօրն որ աղֆաս կու կենային:

29

Ե(ր)կիր էպագ հօրն իշխանին,  
Ետես գմայր եւ գկին բարի,  
Սեւ զգեցեալ ի շուրջ գային,  
Ձկէ՛ֆամնոսն խնդրէին:

30

Հարն երկու աչքն էր կուրացեր,  
Վանց ու կարտու Ալէ՛ֆամին,  
Ջոր անդադար ի լաց կեմար,  
Եւ հատաչէր կսկծազին:

31

Հարէն խնդրէր զոգորմուրիւն,  
Դէմ մօրն լայր ոգորմազին,  
Տվէ՛ք հանգիստ ի ձեր դրան,  
Վանց ու կարտու Ալէ՛ֆամին:

32

Ընայրն լայր ազազակէր-  
Աչքն է նման իմ տղին,  
Շինեցէ՛ք տեղ հանգստեան,  
Վանց ու կարտու Ալէ՛ֆամին:

33

Երբ մայր եւ կին ի դուրս ելին,  
Լկտի ազգկու՛նքն եւ ծառային,  
Ի դուրս գային գմազն զինքն,  
Երեսունն ի ֆաշ կուտանին:

34

Եւ նա կացեալ առ հայր դրան,  
Մինչեւ եղեալ երկու ամին,  
Ատեալ բարակ ի բուխտ երկայն,  
Ի ներս գրեց զանցառելին:

35

Վազճանեցաւ երանելին,  
Անուշահոտ խունկ բուրբեցին,  
Լցաւ ֆաղաֆն եւ շարպատնին,  
Հանց որ յուսով ի տես գային:

36

Հրեշտակն արեալ եւ զիր հոգին,  
Փառօք երկինս ելանէին,  
Խառնիլ ի դասս պարունակին,  
Ուրախութիւն անպատմելին:

37

Ապա ժողովն կուտեցին(4),  
Գնացին զի հայրն ձայնեցին,  
Արի դու տես գայն աղֆատիկն,  
Ունիս գրած բուխտ մի յափին միջին:

(\*) Բնագրում տայն երկու տողը տակասում է:

38

Եր եկ էառ գրութուն ի ձեռացն,  
կարդաց լուա բան գառաչին,  
Ալեխանուս եւ ձեր որդին,  
Լալով ողջոյն իմ ծնողին:

39

Սազմուսարանս ձեր նշան,  
Զիմ մատանին առ Մարգարտին,  
Բայց լսեցէ՛ք զիմ զանկատին,  
Զինչ էո ծառայից հետ ինձ արին:

40

Հայրն անկաւ խելքն զնաց,  
Հանց որ ուշգին զնայ կանկնեցին,  
Մայրն եղեւ աղէկոտոր,  
Մուտ չի գտաւ առնուլ որդին:

41

Ապա ցանեց կարմիր դեղան,  
Ժողովքն ի յետս դարձուցին,  
Մայրն անկաւ ի վերայ որդուն,  
Լայր եւ ձայնէր ողորմագին:

42

Քո մօրն վայ Ռ (հազար) բերան,  
Աշխարհն ամէն զիմ լսեղեն լան,  
Ալեխանուս իմ սիրական,  
Այս ինչ սեւ լուս էր որ լուսացան:

43

Քո մօրն վայ հազար բերան,  
Ամին եկուկ հորդ իշխանին,  
Զիմ հին խոցերս նորացուցեր,  
Հազար անչափ էր Մարգարտին:

44

Գայր ի յառաջ իւր Մարգարտին  
Եւ ճիչ բարձրեալ յոյժ ահազին:  
Ալեխանուս իմ քազ անձին,  
Քանի պահեմ զքո մատանին:

45

Սուք արարին խիտ ահազին,  
Որ աշխարհս ամէն լացին,  
Դարձեալ եհան զծիրանին,  
Եւ զիւր հանդերձսն հազուցանին:

46

Ապա տարան ամփոփեցին,  
Եկեղեցին սուրբ շինեցին,  
Ալեխանուս անուանեցին,  
Շատոց առնէր ողորմութիւն:

47

Շինեցին մեծ եւ ահազին,  
Եկեղեցի որ շատ ուխտ կուլինի,  
Ի մեծն քաղաքին ըստամպօլայ,  
Շատ բժշկութիւն առնէ,  
Ի փառս Քրիստոսի Աստծոյ մերոյ:

2

Յովանիսի Թուրկ(ու)ր(անցոյ)

1

Աչեր ինչ ես անցել հետ ինձի,  
Անդադար դու ծոռ կու նայի,  
Հանապազ կու ցանկանաս,  
Գեմ ի հուրն այրես զիմ հոգի(1):

2

Յորժամ տեսնուս պարկ մի քարախնայ,  
Նստիս ի հետ պլշիս,  
Յանկուրիւն անցանի զնայ,  
Դու կերակուրն յորդանցն լինի(ս):

3

Ով պատուեցաւ մէկ կենալով,  
Որ դու այնչափ լըջադիմիս,  
Այլ մերկ երես ինքն ամաչես,  
Որ սուրբ կենաս աստն ու իսն:

4

Զանհոգութիւն կրէ՛ ի քէն,  
Մարմին լսէ՛ իմ խրատիս,  
Փախիր ի լիտի կանանց,  
Թէ արդար եւ սուրբ դու լինիս:

5

Մի կուտիր անպատեբացմն  
Որ շտապով չի փառերակիս,  
Զի քէ ի կինն մտեմնաս,  
Գեմ բարով ոչ ազատիս:

6

Կարմիրն արիւն է եւ նանիր,  
Տես քէ ասել զնայ կամիս,  
Սպիտակն զագիր է եւ քարախ,  
Եւ գեղեցիկն ոսկեր է եւ միս:

7

Երբ որ կակուղ հազն է կուտած,  
Որ ի տապանն երբեքս նայիս,  
Եւ ամենայն մարմին ոչինչ,  
Լուկ դու իզուրն կու դատիս:

1 - 2 հոազրու՛մ՝ հոգիսն:

8

Կիճն ֆազրքիկ գրուց ունի,  
Էնց որ աչօֆդ հաւանիս,  
Բայց խիտո դիժար աղնատ,  
Նայ յորժամ դիպի ոտֆդ ի յայս ֆարիս:

9

Ինուտն ու առաջն էր գեղեցիկ,  
Յետոյ մահաղեղ որ նաշակիս,  
Լայագին մնաս ի վայր մարմին,  
Ընդէր ոչ դո՛ւ պատկառիս:

10

Ետվ նովանէս Թուրկուրանցի,  
Ի՛ր տար զֆեղ ֆորձ այս շարիս,  
Որ երեսովդ երբաս կրիս,  
Անշէջ որդանցն ֆուն լինիս:

3

**Յովանիսի Թուրկուրանցոյ  
Ասացեալ է Սիրոյ**

1

Գեմ քաւեար օղլի քաւեար,  
Ալվի կու տաս սիրոյ խապար,  
Ծով-ծով աչեր ու լուս ֆնար,  
Քո ունֆն էր ֆան զկամար(1):

2

Ճակասոյ լուս է լուսընկար,  
Բոլոր լուսին շամս ու զամար,  
Վարսերդ ոսկի քելով ֆաշած(2),  
Վերայ անձինդ իջնու հաւար:

3

Երեսդ ի վառ է ծիրանի,  
Վարդ ըսիտան ու նօնօֆար,  
Ծոցդ է պաղչայ վարդով ի լի,  
Իֆարգարիտ ատամ ունֆդ է շար ի շար:

4

Քո ճայնդ անուշ ֆազր եղանակ,  
Բերանդ ի վայր կու քաֆի քօհար,  
Այդ ֆո մատներդ է լուսեղէն,  
Քան զլուսին, որ լոյս կու տայր:

1 - Բնագր.՝ կամար:  
2 - Բնագր.՝ ֆանշած:

5

Անձդ ֆո նոյս(3) բուսեր չինար(4),  
Կու նօն կոայ ֆան զուռ դալար,  
Անասակ ծովիտ նման գերիսն,  
Ի մէջն դարգեր ի արար:

6

Անցեղ նետով զիս խոցեցիր,  
Որ այլ չունիմ քծիշկ արար,  
Է գեղեցիկ կերպ ու սուրաք,  
Որ է ստեղծուած(5) նախ ու նիկար:

7

Նշդարենի ծառ ես ծաղկեր,  
Պտուղ կու տաս մուշք ու ամպար,  
Բեհեղ հազեր ես ծիրանի,  
Իրֆներդ ամէն մարգարտաշար:

8

Քաղաք խարայ Զին ու մաշին,  
Ի այլ երկրի բերեալ պաշար,  
Այս նամպարիդ որ կու ֆայլես,  
Բուսեր շուշան ու նօնօֆար:

9

Կարմունն կապեր ես ապիկի,  
Եւ զետ զինի ուրախարար,  
Ով որ խմէ ի ֆեզանէ,  
Ուրախանայ սրտովն օժար:

10

Արեկ իջնունք ի պաղչանին,  
Ու պլպուլին ենեմֆ աղար,  
Որ ի ֆափուր վարդին սիրուն,  
Ի շուրջ կու գայ նայ ֆանց զղիւսեար(6):

11

Գարնանային ամիսն երբ գայ,  
Հուսար ծաղկին չոր ու դալար,  
Ճղերդ որ դոր զնացֆ առնուն,  
Ի լուսներուն քաֆին ի վայր:

12

Իֆարցն որ սիրու կու հանդիպի,  
Նայ ֆան զկրակ լինի ի վառ,  
Այլ ոչ աղաւթֆ աշֆն կու գայ(7),  
Ոչ ամաւուր կարդան ոչ նառ:

3 - Բնագր.՝ բո նոյս:  
4 - Բնագր.՝ ձինար:  
5 - Բնագր.՝ ստեղծուած:  
6 - Բնագր.՝ զղիւսեարն:  
7 - Բնագր.՝ կուրգայ:

13

Շրթունքի շոգ եւ լուսեղէն,  
Պակներդ ի վար բափի ջուհար,  
Ով որ մեղաց մաշակն առնու,  
Այլ աստուծոյ չտայ խապար:

14

Սէրն զԱղամ դրախտէն եհան,  
Երկիր ձգեց վարար շիւար,  
Եւ աստանայ զնայ մատնեաց,  
Եւ չարչարեաց ամ Զ ի հազար(8):

15

Սէրայ որդիքն խառնակեցան,  
Որք նզնաւորք(9) էին ծար,  
Զփողն ու զցնձազն լսէին,  
Ամէն իջան ի լեռն ի վայր:

16

Կիմն զնվանէսն զլիստեաց,  
Հերովդէի պղծոյն համար,  
Եւ նայ վառեալ էր ցանկութեամբ,  
Փութով տարաւ զկամեն ի կատար:

17

Սէրն հանէ զմարդն ի խելաց,  
Նոր այլ չկայ իսկի խապար,  
Իմաստութիւնն խափանի,  
Եւ հէնց դառնայ քան զդիւսհար(10):

18

Կիմն(ն) քաղցրիկ գրուց ունի,  
Քան զոճ քայլէ առնու զալար,  
Թիկունքն բափէ անկարծակի,  
Որպէս զակնատն բռնէ աննառ:

19

Զունքն քաղէ զաչն դեղէ,  
Ենց որ լինի քան զքելիար,  
Միշտ զպտուկն ծամուէ,  
Զմարդիքն ձգի ի քարն այն ի վայր:

20

Դու ստեղծեր զկիմն ի կողէն,  
Վասն Աղամայ սիրուն համար,  
Թէ անեցէք եւ բազմացիք,  
Եւ շրջիցիք զլեռանքն և ի այլ քարն:

21

Դեռ այն սիրովն բորբոքին,  
Այն հողածին մարդիքս չար,  
Որ համապագ կու պողղնկին,  
Երբան ի կեր որբանցն աւժար:

22

Թուրկուրանցի(11) զձեզ կաղաչի,  
Կնոջ սիրոյ մի տիրանար,  
Որ չի զրկիք դուք ի լուսուն,  
Այլ աստուծոյ չլինի քեզ քար:

4

Եւ Ձեզ Տեսայ Սիրով Նստած

1

Եւ ձեզ տեսայ սիրով նստած,  
Յար եւ նման արեւ տկունք,  
Զինչ պողջայ եւ որ կայ ի ներս,  
Վարդ ու շուշան որ եմ ծաղկունք(1):

2

Աչեր ունիս զինչ քուխ ամպունք,  
Շողան կլափ ու լալ շրթունք,  
Մարգարտաշարէ ատամունք,

3

Թէ վարդապետն զձեզ տեսնու,  
Մտնայ զուսումն ու շատ գրունք,  
Ամէն անձամբ ի դող ելնայ,  
Անցանի զամառն զամառունք(2):

4

Ձեզ ինձ գտար(3) եւ դիմանաք,  
Որ դուք ելնէք լեռունք,  
Սէրն քակէ քարձր քերթեր,  
Դ ի գիլ հանէք վէտք ու սարունք:

5

Տէր Յովանէս Թուրկուրանցի,  
Զձեզ կաղաչէ ոսկի ափունք,  
Վախեմ քէ հուրն այրէ զնոզն,  
Երբակ ուտեն անուրն որբունք:

11 - Բնագր.՝ Թուրկուրանցի:

1 - Բնագր.՝ ծաղկունքն:

2 - Բնագր.՝ զամառունքն:

3 - Ղատար-չափ:

(\*) Չորրորդ տողը բնագրում պակասում է:

8 - Բնագր.՝ հազարն:

9 - Բնագր.՝ նզնաւորք:

10 - Բնագր.՝ զդիւսհար:

5

Տաղ Սիրոյ

1

Յանկարծակի մէկ մի տեսայ,  
Որ կու ցողէր լոյս երեսէն,  
Թուլցեք իջեք շամաբն ի վայր,  
Շող կու կաթեր նայ շողն ի վզէն:

2

Աչերն է ծով ունքն է բուլո ամպ(1),  
Վարուն է դեղձանն ոսկի բիւլէն,  
Ճօճէր գնայր քան գուռի(2) ճիւղ,  
Հրով այրէր գաշխարհն ամէն:

3

Ճօխայգնաց մանրաբայլոզ,  
Հոգի քակէր ի մարմնէն,  
Լուրձն ծածկէր գաշխարհ(3) ամէն,  
Շաքար կաթեր իւր շրթունքէն(4):

4

Երբ որ աչերս ի նա դիպու(5),  
Նա վառեցու քան զմութեղէն,  
Խելքս գնաց ի վայր մնացի,  
Չարհուրեցայ ի տեսիլանէն:

5

Արհնեայ անուն արարողին,  
Որ նա ստեղծեք յափ մի հողէն,  
Է պատուականն էնց զեղեցիկ,  
Չյուսն էր առեր արիքակէն:

6

Խել Յովանէս Թուրկուրանցի,  
Խիստ մի հաներ ոտքի ի ծայրէն,  
Ազէկ սուրաք երբ մեռանի,  
Յամբի գնայ գուն երեսէն(\*):

- 1 - Բնագր.՝ ամ:
- 2 - Բնագր.՝ գուռի:
- 3 - Բնագր.՝ գաշխարհ:
- 4 - Բնագր.՝ շրթունքն էր:
- 5 - Բնագր.՝ դիպայ:

(\*) «Տաղարանչուս սոյն երգը գտնուած է ան-  
ջատ տեղերում և, հետևեալ զասուարութիւնն ունի  
Ա 1, 2, 3: Բ. 5, 4, 6:

6

Արհնեայ Անուն Ամմահ Բանին

1

Արհնեայ Աստուծոյ անուն անմահ բանին,  
Որ ի կողէն կին ստեղծել է,  
Ոչ կողն ի ծուծ ունի (եղբայրք),  
Ոչ կնկան գլուխն իտի է:

2

Կինն գայոց քաղցրախաւ է,  
ԶԱզամ ի դրախտէն արտաքէ,  
Կինն սատանայի ընկեր է,  
Աստուած փրկէ ի կնկանէ:

3

Կինն գ'աւիրն քանայ պզժէ,  
Եւ զՍողոմոն ապականէ,  
Սուրբ Յովանէսն զլիտատ,  
Աստուած փրկէ ի կնկանէ:

4

Կինն ի քիտ ինքն չի վախէ,  
Յարեւ որդուն ոչ ի Թուրքէ,  
Կին գով սիրէ հաւատն այն է,  
Աստուած փրկէ ի կնկանէ:

5

Կինն զեղբայրն խառնակէ,  
Զվէնն եւ զքաթին ի մէջ ձգէ,  
Կինն գով սիրէ հաւատն այն է,  
Աստուած փրկէ ի կնկանէ:

6

Կին զմանուկն յապականէ,  
Ալվի դառնայ եղբար ձայնէ,  
Այլ մեծամեծ մեղանչք առնէ,  
Աստուած փրկէ ի կնկանէ:

7

Կինն քէ այսոր ապաշխարէ,  
Վաղին քան դեւ եւ այլ չար է,  
Աչքն արտասուօք սիրտն արատ է(1),  
Աստուած փրկէ ի կնկանէ:

8

Կինն քէ երդումամբ ճայթէ(2),  
Քեզի համար ինձ մահ տիրէ,  
Մի հաւատար քէ ի հողէ,  
Աստուած փրկէ ի կնկանէ:

- 1 - Բնագր.՝ անարատ է:
- 2 - Բնագր.՝ ճայթի:

9

կինն (որ) գրած է եւ բարի,  
ի սուրբ կուսանքան ցմանի,  
Ազայ Բէ Հար է եւ անդարձ,  
Գիւաց լինի ինքն իւր ի տեղին(3):

10

(եքե) Յովանէս ի կնկանէ,  
Շատ է խմբ դօտտ ի քանէ,  
Ընդով սրտովն երգ գրեր է:  
Աստուած փրկէ ի կնկանէ:

7

Տաղ Յովանիսին

1

Արեկ արեկ իմ խուփ սուրաք,  
Փառք ու պատիւ քո ստեղծողին,  
Եղեմական դրայտուն կու գաս,  
Արևնեալ անուն քո ճաշխողին:

2

Արեկ արեկ գարնամային,  
Արեկ աշնան պայծառ լուսին,  
Նիստ որ հայրիմ երեսոյ ի վեր,  
Տեսոց հերիք է այս ինձ բաժին:

3

Տեսոց բժիշկ է հիւանդին,  
Առողջութիւն է ջերմտալին,  
Աչերոյ ծով է ծարուածին,  
Բերանոց քաղցր է քաղցածին:

4

Մտոց է դրախտ անմահութեան,  
Ի յետ դարձնէ զկյան հողին,  
Ոչ մեռանի ոչ ծերամայ,  
Ոչ երեսնին դառնայ դեղին:

5

Վաղիւն որում որ հանդիպի,  
Ի ծայր ելնէ բարով տարին.  
Ով զսուրաքս համբուրէ,  
Խնդմով անցնէ բոլոր ամսին:

6

Մով դու մերով ի ներս ձեռնս,  
Մտաղիկ քան զժառն կանաչին,  
Ով կուս միջացն գիրկ ամէ,  
Կանաչ մնայ քան զմշտաբնին:

3 - Բնագր. տեղին:

7

Եվ Յովանէս Թուրկուրանցի,  
Փառասօրէ հայր եւ գորդին,  
Ազուոր սուրաքն ի հոգ դառնայ,  
Անշէջ այրէ զիր սիրելին:

8

Սիրոյ Յովանիսի  
(Անտիպ)

1

Ուն(ք)եր ունիս դալմով քաշած,  
Բերան ունիս շաքրով լցրած,  
Ես ոչ իմած եմ ոչ հարքած,  
Խելիս ի գլուխս ունին տարած:

2

Աչեր ունիս դու զազալի,  
Ով քեզ տեսնու զերդ մտն հալի,  
Մրտիկս ի փորս կու մաշի,  
Գուն երեսիս զերդ խունկ լինի(1):

3

Երբ որ քայլես փոշի ելնայ,  
Սիրտս ի փորս(2) կու դողայ,  
Խելիս ի գլուխս կելնայ կերբայ,  
Հեղ մի հայր քէ չէ մեռայ:

4

Երբ զքեզ տեսայ(3) խելիս անցաւ,  
Չպատուիրանս մտացայ,  
Յետ եւ քեզի հետեւեցայ,  
Ամենեւին խեր չի տեսայ(4):

5

Յլտան իւր զարձեր սիրուց,  
Զինչ(5) զպլպուլն վերայ վարդին,  
Այս անցաւոր(6) ազտ աշխարհիս,  
Քանի դատիս զերդ զանատուն: Ով այր:

- 1 - Բնագր. լինիցի:
- 2 - Բնագր. բոր:
- 3 - Բնագր. տես:
- 4 - Բնագր. տեսայ ես:
- 5 - Բնագր. զինչս:
- 6 - Բնագր. անցոր:

Նոր-Ջուղա

(Խնացեալը յաջորդում)

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ